ԵԴ2/12703/02/23

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

# ՈՐՈՇՈՒՄ

## ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**08 սեպտեմբերի 2023թ.** **ք. Երևան**

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, նախագահությամբ դատավոր Ս. Ուլիխանյանի, ծանոթանալով «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայցադիմումին և դրան կից փաստաթղթերին,

**ՊԱՐԶԵՑ**

«Խաչ-Արմ» ՍՊԸ-ի, «Էլլ-Գա-Ման» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Արև Հարությունյանը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Բարեկարգում» տնօրինության՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Դատարանը, նախագահությամբ դատավոր Կ. Արզումանյանի, 14.07.2023 թվականին որոշում է ընդունել հայցադիմումը վերադարձնելու մասին:

Հայցվորների ներկայացուցիչը 25.07.2023 թվականին ստացել է հայցադիմումը և 26.07.2023 թվականին կրկին ներկայացրել է հայցադիմումը՝ շտկելով հայցադիմումի վերադարձման համար հիմք հանդիսացած թերությունները: Հայցվորի կողմից պահպանվել են թերությունները շտկելու համար տրամադրված ժամկետը:

Դատարանը, նախագահությամբ դատավոր Ս. Ուլիխանյանի, 03.08.2023 թվականին որոշում է ընդունել հայցադիմումը վերադարձնելու մասին:

Հայցվորի ներկայացուցիչը հայցադիմումը և կից փաստաթղթերը ստացել է և հայցադիմումը կրկին ներկայացվել է 01.09.2023 թվականին՝ հայցադիմումի վերադարձման համար հիմք հանդիսացած թերությունները շտկած: Հայցվորի կողմից պահպանվել են թերությունները շտկելու համար տրամադրված ժամկետը:

Կրկին ներկայացված հայցադիմումը դատավորին է հանձնվել 05.09.2023 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Քննության առնելով հայցադիմումը, ուսումնասիրելով կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ ներկայացված հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի

պահանջներին, առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ, 234.6-րդ հոդվածներով՝ Դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

«Խաչ-Արմ» ՍՊԸ-ի, «Էլլ-Գա-Ման» ՍՊԸ-ի ներկայացուցչի հայցադիմումն ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2023 թվականին հոկտեմբերի 20-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացմանից պահից և ենթակա չէ բողոքարկման:

**ԴԱՏԱՎՈՐ** **Ս.ՈՒԼԻԽԱՆՅԱՆ**